

**ՄՏՈՐԵՐԿՐՅԱ ՔԱՂՑՐԱՀԱՄ ՋՐԵՐ**

Միջավայրի պայմանների և մարդու առողջության վրա բացասաբար ազդող ֆիզիկական, քիմիական և կենսաբանական աղտոտիչների թափանցումը, առաջացումն ու կուտակումը բնական ջրերում կոչվում է ջրի աղտոտում: Ջրի աղտոտման աղբյուրները հետևյալն են.

- կենցաղային հոսքաջրերը,
- արդյունաբերական հոսքաջրերը,
- ձնհալի և անձրևների ժամանակ հողահանդակներից տեղափոխված պեստիցիդները,
- բնակավայրերից վնասակար նյութերը,
- անձրևի և ձյան միջոցով՝ մթնոլորտից անջատվող աղտոտող նյութերը:


Աղտոտման աղբյուրները կարող են լինել ինչպես կետային, այնպես էլ ցրված: Կենցաղային հոսքաջրերը հիմնականում աղտոտված են լինում կենսածին նյութերով, արդյունաբերական հոսքաջրերը՝ առավել հաճախ նավթամթերքներով, ֆենոլներով, ծանր մետաղներով (կապար, կադմիում, պղինձ, ցինկ և այլն) և բարդ օրգանական միացություններով (սինթետիկ լվացամիջոցներ, ներկեր, ճարպեր), որոնք վատթարացնում են ջրի որակը, խմելու և սննդի մեջ օգտագործելու համար դարձնում ոչ պիտանի, խախտվում են ջրային ավազանի կենսաբանական շարժընթացները, նվազում է աղտոտող նյութերից ջրի ինքնամաքման հատկությունը, փոխվում է ջրային կենսաբազմազանության կազմն ու սննդային արժեքը: Կենցաղային հոսքաջրերը հիմնականում պարունակում են աղիքային վարակիչ հիվանդությունների հարուցիչներ:

Ստորերկրյա քաղցրահամ ջրերի քանակական դիտարկումներն իրականացվել են հանրապետության ազգային ցանցում ընդգրկված 119 ստորերկրյա ջրաղբյուրում, որոնք ներառում են 25 շատրվանող հորատանցք, 47 չշատրվանող հորատանցք և 47 բնաղբյուր: Ջրաղբյուրներում կատարվում են ջրի ծախսի, մակարդակի (ճնշման) և ջերմաստիճանի դիտարկումներ ամսական 6 անգամ հաճախականությամբ:

**Հյուսիսային ջրավազանային կառավարման տարածք**

Հյուսիսային ՋԿՏ-ում ստորերկրյա քաղցրահամ ջրերի քանակական մշտադիտարկումներ կատարվել են 2 բնաղբյուրում, որտեղ դիտարկվել են ջրի ջերմաստիճանը և ջրի ծախսը:

Հաղարծին համայնքի N2058 և N2059 դիտակետերում նկատվել է ծախսի աննշան իջեցում:



**Գծապատկեր 1. Հյուսիսային ՋԿՏ-ի բնադրյուններում ծախսերի փոփոխությունները**

Ջրի որակի մոնիթորինգն իրականացվել է N 2058 բնադրյունում, որտեղ հանքայնացման և նիտրատ իոնի պարունակությունները չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները:

**Ախտորյանի ջրավազանային կառավարման տարածք**


Ախտորյանի ՋԿՏ-ում ստորերկրյա քաղցրահամ ջրերի քանակական մշտադիտարկումներ կատարվել են թվով 40 դիտակետում, որտեղ դիտարկվել են ջրի ջերմաստիճանը, ծախսը և մակարդակը:

Արարատյան արտեզյան ավազանի N105, N108, N192, N198, N1521, N1533, N1537, N2001, N2002, N2018, N2021, N2022, N2025, N2026, N2055 և N2057 դիտակետերում նկատվել են մակարդակի բարձրացումներ:




Նախորդ եռամսյակի համեմատ Ակնաշեն, Տարոնիկ (N2001, N2002) համայնքների շատրվանող հորատանցքները սկսել են շատրվանել և դիտարկվել են դրական մակարդակներ: Դեկտեմբեր ամսին N2001 դիտակետի ծախսը կազմել է 0.44լ/վ:


Շիրակի մարզի դիտակետերում հիմնականում նկատվում են աղբյուրների ծախսերի իջեցումներ, բացառությամբ Մարմաշենի N2035 դիտակետում, որտեղ ծախսի ավելացումը անշան է՝ 0.07լ/վ: Աշոցքի N2038, N2039, N2040 և N2077 դիտակետերի աղբյուրներում նկատվել են ծախսերի աննշան իջեցումներ: Աշոցքի N2041 դիտակետում նախորդ եռամսյակի պես դիտարկվել է ծախսի համեմատաբար կայուն վիճակ: Առափիի N2042 դիտակետի ջրհորում նկատվել է ջրի մակարդակի բարձրացում, իսկ Ախտորյանի N2043 դիտակետում դիտվել է ջրի մակարդակի իջեցում: Նոյեմբեր և դեկտեմբեր ամիսներին N2053, N2108, N2108 և N2051 դիտակետերում կատարվել են վերանորոգման աշխատանքներ հետագա ճշգրիտ չափումներ կատարելու համար:

Ջրի որակի մոնիթորինգն իրականացվել է 19 դիտակետում: Արտամետի N2083 և Լուսազյուղի N2022 հորատանցքերում, ինչպես նաև Առափիի գրունտային ջրհորի N20242 դիտակետում հանքայնացումը գերազանցել է համապատասխան ՍԹԿ-ն:




**Գծապատկեր 2. Ախտորյանի ՋԿՏ-ի բնադրյուններում ծախսերի փոփոխությունները**






**Գծապատկեր 6. Ախուրյանի ՋԿՏ-ի ֆրունտային ջրհորների մակարդակների փոփոխությունները**



**Գծապատկեր 7. Ախուրյանի ՋԿՏ-ի ստորերկրյա ջրերի դիտակետերում նիստրատ խոնի պարունակությունը**



**Գծապատկեր 8. Ախուրյանի ՋՏ-ի ստորերկրյա ջրերի դիտակետերում ջրի հանքայնացումը**

## Հրագրանի ջրավազանային կառավարման տարածք



Հրագրանի ՋԿՏ-ում ստորերկրյա քաղցրահամ ջրերի քանակական մոնիթորինգ կատարվել է թվով 32 դիտակետում, որտեղ դիտարկվել են ջրի ջերմաստիճանը, ծախսը և մակարդակը:

Արարատյան արտեզյան ավազանի (Հովտաշեն, Մասիս, Ջրահովիտ) N2053, N1519 և N2007 շատրվանող հորատանցքերում նկատվել են ծախսերի բարձրացումներ: Մակարդակի իջեցումներ են նկատվում Արարատյան արտեզյան ավազանի նախալեռնային գոտու N2085 (Արագած), N2086 (Դոդո), N2087 (Աղավնատուն) և N2088 (Լեռնամերձ) դիտակետերում:

Հրագրան գետավազանի N246 (Բջնի) դիտակետում դիտվել է ծախսի իջեցում:


Արագածոտնի մարզում՝ Նիգավանի N2010 և N2011 ջրհորներում նկատվել են գրունտային ջրերի մակարդակի իջեցումներ: Համանման իջեցումներ են նկատվել նաև Ապարանի N2051 «Սիրո» աղբյուր դիտակետում:

Ջրի որկաի մոնիթորինգ իրականացվել է 13 դիտակետում: Մասիսի N1519 Ջրահովիտի N2007, Հովտաշենի N2053, շատրվանող հորատանցքերում հանքայնացումը գերազանցել է համապատասխան ՄԹԿ-ն:



Շատրվանոց հորատանցքեր  
Մակարդակ, մ


Հրազդանի ՋԿՏ



Գծապատկեր 11. Հրազդանի ՋԿՏ-ի շատրվանոց հորատանցքերի մակարդակների փոփոխությունները


Չշատրվանոց հորատանցքեր  
Մակարդակ, մ

Հրազդանի ՋԿՏ




Չշատրվանոց հորատանցքեր  
Մակարդակ, մ

Հրազդանի ՋԿՏ




Գծապատկեր 12. Հրազդանի ՋԿՏ-ի չշատրվանոց հորատանցքերի մակարդակների փոփոխությունները




Փճապատկեր 13. Հրազդանի ՋԿՏ-ի քրունտային ջրերի մակարդակների փոփոխությունները

Նիտրատ իոն

Հրազդանի ՋԿՏ



Փճապատկեր 14. Հրազդանի ՋԿՏ-ի ստորերկրյա ջրերի դիտակետերում նիտրատ իոնի պարունակությունը





Փճապատկեր 15. Հրազդանի ՋԿՏ-ի ստորերկրյա ջրերի դիտակետերում ջրի հանքայնացումը

## Սևանի ջրավազանային կառավարման տարածք


Սևանի ՋԿՏ-ում ստորերկրյա քաղցրահամ ջրերի քանակական մոնիթորինգն իրականացվել է 15 դիտակետում, որտեղ դիտարկվել են ջրի ջերմաստիճանը, ծախսը և մակարդակը:

Գրեթե բոլոր շատրվանող հորատանցքերում դիտվել են մակարդակների բարձրացումներ:

Ջրի որակի մոնիթորինգն իրականացվել է 8 դիտակետում: Հանքայնացումն ու նիտրատ իոնի պարունակությունը չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները:




**Գծապատկեր 16. Սևանի ՋԿՏ-ի բնադրյուններում ծախսերի փոփոխությունները**







**Գծապատկեր 17. Սևանի ՋԿՏ-ի շատրվանոց հորատանցքերում ջրի մակարդակների փոփոխությունները**




**Գծապատկեր 18. Սևանի ՋԿՏ-ի շատրվանոց հորատանցքերում ջրի ծախսերի փների ուժղությունները**



**Գծապատկեր 19. Սևանի ՋԿՏ-ի շատրվանոց հորատանցքերում ջրի մակարդակների փոփոխությունները**



**Գծապատկեր 20. Սևանի ՋԿՏ-ի դիտակետերում նհտրատ իոնի պարունակությունը**



**Գծապատկեր 21. Սևանի ՋԿՏ-ի դիտակետերի հանքայնացումը**



## Արարատյան ջրավազանային կառավարման տարածք

Արարատյան ՋԿՏ-ում ստորերկրյա քաղցրահամ ջրերի քանակական մոնիթորինգն իրականացվել է 23 դիտակետում, որտեղ դիտարկվել են ջրի ջերմաստիճանը, ծախսը և մակարդակը:


Մալիշկա (N502), Կեչուտ (N2060), Գառնիի (N2045, N2046) բնակավայրերի դիտակետերում նկատվել են ծախսի իջեցումներ: Ագարակաձորի (N785) դիտակետում նկատվել է ծախսի կայուն վիճակ: Արարատյան արտեզյան ավազանի հարավ-արևելյան մասում գտնվող Եղեգնավանի N2065, Արարատի N2076 դիտակետերում նկատվել են մակարդակի իջեցումներ:

N2064, N2069 շատրվանող հորատանցքերում նկատվել է ջրի մակարդակի իջեցում: Ծախսի բարձրացումներ են դիտվել Արտաշատի N2062 և Դալարի N2063 շատրվանող հորատանցքերում:


Ջրի որակի մոնիթորինգն իրականացվել է 10 դիտակետում: N2067 դիտակետի հանքայնացումը գերազանցել է համապատասխան ՍԹԿ-ն:




**Գծապատկեր 22. Արարատյան ՋԿՏ-ի բնադրյունների ծախսերի փոփոխությունները**




**Գծապատկեր 23. Արարատյան ՋԿՏ-ի շատրվանոցի հորատանցքերում մակարդակների փոփոխությունները**




**Գծապատկեր 24. Արարատյան ՋԿՏ-ի շատրվանոցի հորատանցքերում ծախսերի փոփոխությունները**




**Գծապատկեր 25. Արարատյան ՋԿՏ-ի չշատրվանոցի հորատանցքերում մակարդակների փոփոխությունները**



**Գծապատկեր 93. Արարատյան ՋԿՏ-ի գրունտային ջրհորներում մակարդակների փոփոխությունները**



**Գծապատկեր 93. Արարատյան ՋԿՏ-ի ստորերկրյա ջրերի դիտակետերում նիտրատ իոնի պարունակությունը**





**Գծապատկեր 93. Արարատյան ՋԿՏ-ի ստորերկրյա ջրերի դիտակետերի հանքայնացումը**

## Հարավային ջրավազանային կառավարման տարածք


Հարավային ՋԿՏ-ի ստորերկրյա քաղցրահամ ջրերի քանակական մոնիթորինգն իրականացվել է 7 բնադրյուրում, որտեղ դիտարկվել են ջրի ջերմաստիճանը և ծախսը:

Դիտակետերի մեծ մասում դիտվել են ծախսի իջեցումներ:


Ջրի որակի մոնիթորինգն իրականացվել է 4 դիտակետում, որտեղ ցուցանիշները չեն գերազանցել ՍԹԿ-ները:



**Գծապատկեր 26. Հարավային ՋԿՏ-ի բնադրյուրներում ծախսերի փոփոխությունները**



**Գծապատկեր 27. Հարավային ՋԿՏ-ի ստորերկրյա ջրերի դիտակետերում նիտրատ իոնի պարունակությունը**



**Գծապատկեր 28. Հարավային ՋԿՏ-ի ստորերկրյա ջրերի դիտակետերի հանքայնացումը**